ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 3-ին, կիրակի - Բուն Բարեկենդան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Պարույր քահանա Ավետիսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգիսյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 12):

Փետրվարի 10-ին, կիրակի - Բ. կիր. Քառասնորդական Պահոց (Արտաքսման):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ադամ քահանա Մակարյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Փետրվարի 14-ին, հինգշաբթի - ԺԱ օր Մեծի Պահոց: ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ: Տօն քառասնօրեայ զալստեանն Քրիստոսի ի Տաճարն:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զարեհ վարդապետ Կաբաղյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Տե՛ր, թող բացվեն մեր աչքերը» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 16):

Փետրվարի 17-ին, կիրակի - Գ. կիր. Քառասնորդական Պահոց: (Անառակին):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Փետրվարի 24-ին, կիրակի - Դ. կիր. Քառասնորդական Պահոց (Տնտեսին):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արամ քահանա Միրզոյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 21):